ԲԱՐՍԵՂ ԱՐՍԵՆԻ
ԳԵՂԱՄՅԱՆ

Ծնվել է 1850թ., Երևանում, ազնվականի ընտանիքում: Սովորել է Թիֆլիսի դասական գիմնազիայում, որը, սակայն, չի ավարտել: Այնուհետև մեկնել է Մոսկվա և ընդունվել Պետրովյան ակադեմիան, որն ավարտելուց հետո վերադարձել է Երևան և 1875 թվականից անցել պետական ծառայության: Եղել է Երևանի նահանգապետին առընթեր հատուկ հանձնարարությունների գծով պաշտոնյա: Ծառայության ընթացքում կատարել է մի շարք պատասխանատու հանձնարարություններ, ստացել է կոլեգիական քարտուղարի աստիճան:

Երևանի քաղաքագլուխ է ընտրվել 1884թ. սեպտեմբերին և պաշտոնավարել 9 տարի:

1893թ. կարճ ժամանակով պաշտոնավարել է իբրև Նոր Բայազետի գավառապետ:

1893թ. դեկտեմբերին թողել է Երևանի քաղաքագլխի պաշտոնը և տեղափոխվել Թիֆլիս:

Պարգևատրվել է Սուրբ Աննայի, Սուրբ Ստանիսլավի 3-րդ աստիճանի և պարսկական <<Առյուծ և արև>> շքանշաններով: